# ՀԱՏՈՒԿ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

գ. Այգեզարդ 19.06.2025թ.

<<ՊՐՈՖԱՐՏ>> ՍՊԸ ի դեմս տնօրեն Վահե Մարգարյանի «վարձատու», մի կողմից, «ՆԱՏԱԼԻ ՇԻՆ» ՍՊԸ – ն, հետագայում՝ «Վարձակալ», ի դեմս տնօրեն Ա. Ավետիսյանի, որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը, որը գործում է անժամկետ.:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Վարձատուն պայմանավորվում է վճարի դիմաց վարձակալական հիմունքներով ժամանակավոր օգտագործման համար տրամադրել

1.1.1 Գլդոն JCB, գլդոն 6-8 տ , **արտադրման տարեթիվը 2017 թ** , **գրանցման համարանիշը** :

1.2 Վարձակալական վճարի **ժամավճարի չափը մեկ հազար ՀՀ դրամ /1 000/ ԱԱՀ-ով :**

## 2. ՎԱՐՁԱՏՈՒԻ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն պարտավորվում է՝

- գույքը հետագա շահագործման նպատակով սարքին վիճակով հանձնել Վարձակալին,
- Գույքը վարձակալության տալ նրա բոլոր պարագաներով եւ դրան վերաբերվող փաստաթղթերով,
- ժամկետից շուտ պայմանագրի լուծարումը կատարել գրավոր նախազգուշացումից հետո

2.2 Վարձակալը պարտավորվում է՝

- ժամանակին վճարել Վարձատուին՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 10,
- վարձակալած գույքը շահագործել նպատակային՝ պահպանելով շահագործման եւ տեխնիկայի անվտանգության նորմաները,
- կրել վառելիքի, էլեկտրաէներգիայի, աշպատավարձի, ինչպես նաեւ վարձակալած գույքի ընթացիկ վերանորոգման եւ վարձակալված գույքի պահպանման ծախսերը,
- վարձակալած գույքը ետ վերադարձնել այն վիճակում, ինչպես այն ստացվել է հաշվի առնելով նորմալ մաշվածությունը,
- վարձավճարի ժամկետից ուշացման դեպքում սահմանել տույժ 0,5%-ի չափով յուրաքանչյուր ուշացած օրվա համար

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

3.1 Սույն պայմանագիրը կարող է ժամկետից շուտ լուծարվել հետեւյալ դեպքում

- երբ վարձակալը գույքը օգտագործում է ոչ նպատակային
- երբ աշխատանքի ընթացքում էապես վատթարանում է գույքի վիճակը

## 4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Վարձակալության մնացած պայմանները, որոնք չեն նախաձեռնված սույն պայմաններում, պարտավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ:

4.2 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրության պահից եւ գործում է մինչեւ սույն պայմանագրով սահմանված Կողմերի պարտավորությունների ամբողջական կատարումը:
4.3 Սույն պայմանագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՒ ՌԵԿՎԻԶԻՏՆԵՐԸ

«ՎԱՐՁԱՏՈՒ»`

«_ՊՐՈՖԱՐՏ » ՍՊԸ
ՀՀ, Արարատ, Այգեզարդ Գայի փ. տ33
ՀՎՀՀ 04251173
Հ/Հ 1220013336981000
«ԱԿԲԱ բանկ » ՓԲԸ «Արտաշատ » մ/ճ

սեփականատեր ________ Վահե Մարգարյան

«ՎԱՐՁԱԿԱԼ»`

« ՆԱՏԱԼԻ ՇԻՆ » ՍՊԸ
Արարատի մ, գ. ԱՅԳԵԶԱՐԴ, Իսահակյան փ., Տ 7
ՀՎՀՀ 04237166
Հ/Հ 220013337435000
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ՓԲԸ

Տնօրեն ________ Ա. Ավետիսյան